սաց Փոխարքային Եգիպտոսի, որ էր այր ժանտագործ և խռովայոյզ, եւ պատուիրեաց նմա ասել ցՔաղաքապետն դադարիլ յայնպիսի գործոց և սիրով հաշտիլ ընդ Հայս։ բայց նա ըստ բնաբոյս բարուց իւրոց առաւել յուզեաց զխռովութիւնն, և Հայք նկրտէին խսպառ հերքել յինքեանց զբռնութիւն Քաղաքապետին։ եւ այսպէս երկար խռովութեամբ և ատելութեամբ հակառակեալ՝ հաշտեցան ապա միջնորդութեամբ Դատաւորին։ Յետ այնորիկ կոչեաց զՔաղաքապետն և զՆուրի Էֆէնտի եւ զգլխաւորս երկուց ազգաց և պատուիրեաց նոցա զսպել զստահակն, և զանհնազանդն մատնել Դատաւորին եւ Քաղաքական իշխանութեան, եւ այլ բանք երկար։ Թէպէտեւ Քաղաքապետն կախեմ կտրեմ ասէր, այլ Նուրի Էֆէնտի նըրբախօս բանիւք յորդորէր զերկոսին կողմանս հնազանդիլ կամաց Արքայի և հրամանաց նորին։ եւ ապա ցրուեցան յիւրաքանչիւր տեղիս։ Իսկ փոխանորդ Ստեփաննոս եպիսկոպոս պատուիրեաց ժողովրդոց յատենի եկեղեցւոյ դադարիլ այնուհետեւ 'ի վիճելոյ եւ 'ի խօսելոյ՝ ընդ Յոյնս։ այլ լռութեամբ գոհանալ զԱստուծոյ եւ օրհնել զԱրքայ, և եթէ պատահեսցի ինչ՝ ազգ առնել Փոխանորդին։ Զնոյն խոստացան և Յոյնք պատուիրել ուխտաւորաց իւրեանց։

Հայք սակս կախելոյ զպատկերն 'ի խորանն Ծննդեան տեղւոյն, հարին զմի բեւեռ, որպէս արարեալ էին Յոյնք, այլ նոքա չառեալ յանձն, սկսան խօսիլ բանս զկծանաց, թէ յորմէ՞ առիք հրաման, չունիք իրաւունս առնել զայդպիսի իրս, զի տեղին մեր է, և դուք իբրեւ հիւր կատարեցէք զպաշտօնն ձեր և ելէք արտաքս, իսկ Հայք ասէին թէ տեղն Թագաւորին է և մեք բաժանորդ ընդ ձեզ։ եւ 'ի բազմանալ բանից, եհաս խնդիրն առ Դատաւորն, չեւ եւս լուծեալ խնդրոյս, յարեաւ այլ խմն չիսթ անդ՝ զի մի ոմն 'ի միաբանացն Հայոց աւել ածէր առաջի դրան վանաց՝ Յոյնք 'ի վերայ հասեալ արգելին զայն և զաւելն փչրեցին։ բազմացաւ վէճն յերկուց կողմանց, Հայք ազգ արարին Դատաւորին, և նորա կոչեալ զԹարգմանն Յունաց, յանդիմանեաց զնա վասն բեւեռին, և առաջի արար զիրաւունս բաժանորդութեան, և պատուիրեաց չածել աւել 'ի դուռն վանացն Հայոց՝ վարիլ սիրով և խաղաղութեամբ։ եւ 'ի